17.11.2024

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի երիտասարդներ

Սևան համայնքի կենսունակությունն ապահովող ու թարմ շնչառություն հաղորդող ուսանողներ,

Շնորհավորում եմ ձեզ Ուսանողության միջազգային օրվա առթիվ, որը առաջադեմ հայացքների ու գաղափարների, լուսավոր ու հավակնոտ երազանքների ու նպատակների խորհրդանիշն է:

Դուք երաշխավորն եք մեր պետության զարգացման և առաջընթացի, մեր ապագայի և այսօր, ուսանողական լսարաններում նստած, քայլ առ քայլ հարթում եք ձեր մասնագիտական և քաղաքացիական ուղին՝ կուտակելով անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ:

Միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական և հետբուհական հաստատություններում ուսանող մեր երիտասարդները համայնքներն ու պետությունը ուժեղացնելու, կայուն առաջընթացն ապահովելու երաշխավորներն են:

Սիրելի ուսանողներ

Ձեր ընկերներից շատերն Արցախյան պատերազմներում և Հայաստանի Հանրապետության սահմանները պաշտպանելիս ուսանողական լսարանները փոխարինեցին դիրքերով ու խրամատներով, իրենց ժամկետային զինվորական ծառայությունը դարձրին հերոսացում:

Քանի քանիսը հայրենիքի պաշտպանության զոհասեղանին դրեցին ամենաթանկը՝ իրենց երիտասարդ կյանքը՝ մնալով հավերժ զինվոր և հայրենիքի պաշտպան:

Հավերժ փառք և խոնարհում հերոսացած մեր ուսանող տղաների հիշատակի առաջ:

Իմ երիտասարդ բարեկամներ,

Դուք մեր երկրի ու համայնքի այսօրն ու վաղն եք, մենք հպարտանում ենք ձեր հաջողություններով ու ձեռքբերումներով, ձեր ակտիվ դիրքորոշմամբ, ձեր նպատակասլացությամբ և հայրենասեր կեցվածքով: Ձեր ուսանողական տարիները թող դառնան արժապատիվ ապագա կերտելու երաշխիքը:

Ես վստահ եմ, որ հենց դուք՝ այսօրվա ուսանողներդ՝ գիտակ ու խելացի, պատրաստված ու նվիրյալ, մեր համայնքին ու երկրին հաղորդելու եք թարմ շունչ, իսկ ձեր խոսքն ու գործը լինելու են որոշիչ ու վճռական:

Շնորհավոր տոնդ սիրելի ուսանող

Քո նպատակներով ու ձգտումներով, գիտելիքներով և իմացությամբ, քո հստակ մտածողությամբ, ճիշտ դիրքորոշմամբ է պայմանավորված, թե ինչպիսի պետություն և համայնք ենք ունենալու ապագայում:

Յուրաքանչյուր օրը դարձրեք բացահայտելու և սովորելու հնարավորություն, ձգտեք ու առաջ գնացեք, զինվեք նոր գիտելիքներով, վայելեք ուսանող լինելու մեծագույն բերկրանքը:

Սիրելի երիտասարդներ

Սևան համայնքի տեղական իշխանությունը կանգնած է ձեր կողքին, ձեր վստահելի բարեկամն է, ձեր համարձակ գաղափարների կյանքի կոչողը և միաժամանակ կարևորում է հենց ձեր դերակատարումը համայնքի զարգացման և առաջընթացի գործում:

Այսօր, այս տոնական պահին իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքի ավագանու, բնակավայրերի վարչական ղեկավարների անունից Սևան համայնքի ուսանողներին մաղթում եմ վստահություն սեփական ուժերի նկատմամբ, կենսասիրություն, կամք և հաստատակամություն, առաջ գնալու նպատակասլացություն, առողջություն և երջանկություն, հաջողություն ուսման մեջ և անձնական կյանքում, վերելքներ ու համարձակ նախաձեռնություններ, ուսումնառության բովանդակալից ու նպատակասլաց տարիներ:

Եղեք պրպտող ու նախաձեռնող, դարձեք մեր երկրի ամուր հենասյուները՝ օժտված քաղաքացիական բարձր պատասխանատվությամբ ու մասնագիտական կայուն գիտելիքներով: